




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.71-ի

Բ-77

№ 11 ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 11

ՅԵԼԵՆԱ ԲՈՐԻՆՍԿԱՅԱ

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԴԱՏ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1926

21 JUL 2006

№ 11 ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 11 25 NOV 2010

ՅԵԼՆԱ ԲՈՐԻՆՍԿԱՅԱ

891.71-15

P-77

1003

13188

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԴԱՏ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1926 թ.

4 MAR 2013

2809

ՏՊՎՈՒՄ Ե ՄԱՆԿԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՆՁ-
ՆԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ

Գրառեպ. № 472. Պ. № 1531. Պեսհրաս. № 380. Տիր. 5000

Պեսհրասի IV տպարանի կենդանացում

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԴԱՏ

Ինչ գեղեցիկ որ եր, և ինչ ուրախ: Յեվ հանկարծ—շըրխկ, վոնց վոր կացնի քյուվով մարդու գլխին տաս—Սուրիկի հետ պատահած դեպքը: Բայց դա յերեկոյան եր, իսկ ամբողջ առավոտը և ամբողջ որը քաղաքի փողոցներում շտապ յերթեկում եյին պիոներները տուփերն ուսերից սպիտակ ժապավեններով կախած, վորոնց վրա հեռվից աչքի եր ընկնում կարմիր, խոշոր տառերով գրած—«Անապաստան յերեխաներին»:

Ամեն տեղ կարմիրն եյին տալիս նրանց փողկապները, զրնգում եյին տուփերը—քաղաքը ամբողջովին վողողված եր պիոներներով: Այդ որը նրանք շատ փող հավաքեցին անապաստան յերեխաների համար:

Ժամի 4-ին Պիոներական ակումբում առաջին խմբի բոլոր ողակների ժողովն եր և, ինչպես լինում ե այդպիսի դեպքերում, ողակավարները չեյին կարողանում կարգ պահպանել. բոլոր ողակները ցրիվ յեկան այս ու այն անկյունը և բոլորը հպարտանում եյին մեկ մեկու առաջ թե իրենց ողակը բոլորից շատ ե հավաքել:

Ահագին դահլիճում այնպիսի աղմուկ եր-
տիրում, վոր ահանջ եր խլացնում: Յեվ հան-
կարծ, ով գիտե վորտեղից, կարծես գետնի տա-
կից մի լուր տարածվեց՝ Սուրբիլը տուփից փող
ե հանել:

Անյերևակայելի խառնաշփոթություն:

— Բամբասանք ե, զրպարտություն ե,—
գոռում եյին մի քանիսը:

— Սուտ ե — բղավում եյին մյուսները: Վա-
հանը բարձրանում ե սանդուխքների ամենա-
բարձր աստիճանի վրա և այնտեղից գոռում:

— Վկաներ, վկաներ, ով ե տեսել: Յեվ ահա
դուրս ե գալիս դահլիճի մեջտեղը Ռհանյանը և
բարձր ձայնով ասում ե.

— Յես:

Նրա հետևից դուրս ե գալիս Կոստանը:

— Յես ել եմ տեսել:

Խոր լուսթյուն:

— Ազնիվ պիտներական խոսք, — հարցնում
ե հանկարծ մեկը:

— Ազնիվ պիտներական խոսք եմ տալիս, վոր
յես ինքս իմ աչքովս տեսա, Կոստանն ել տե-
սավ, ինչպես Սուրբիլը մի փայտի կտորով փող
եր հանում տուփի միջից:

Նա մեզ չեր տեսնում, վորովհետև մենք

ցանկապատի հետևն եյինք կանգնած: Կոստանն
ել ե նույնը հաստատում ազնիվ խոսքով:

Յեվ ահա բոլոր գլուխները, բոլոր հայացք-
ներն ուղղվում են Սուրբիլի կողմը: Նա նստել
եր իր փողկապի պես կարմրած և կուչ եր յեկել:
Շուշիկը մոտենում ե նրան և, ուղիղ աչքերին
նայելով, հարցնում ե.

— Սուրբիլ, դու լսեցիր. ճիշտ ե դա: Սու-
րբիլը գլուխը կախ ե գցել: Հանկարծ ինչ վոր
հոսահատ վճռականությամբ բարձրացնում ե
գլուխը և ասում.

— Ճիշտ ե:

— Դու փող ես գողացել, — հարցնում ե Շու-
շիկը: Նրա ձայնը դողում ե հուզմունքից:

— Գողացել եմ, — մռայլ պատասխանում ե
Սուրբիլը:

— Շատ:

— Մի ուրբի:

Նրա գլուխը նորից կախվում ե ցածը, ցածը:

— Լավ, ինչպես կարող եյիր դու այդ բանն
անել, — նորից հարցնում ե Շուշիկը և թափ ե
տալիս նրա ուսը: Նա ինքն ել պատրաստ ե լաց
լինել, իսկ շուրջը ամեն ինչ խառնվել ե:

— Դուրս վաճել նրան խմբից. պոկել նրա
վրայից փողկապը: Նա մեր ամբողջ կողմնակալը
խայտառակեց: Դուրս, դուրս, քշեցեք նրան:

Նիստ առ խիտ շրջապատում են Սուրբիկին։
Նա արդեն կարմրած չե, նա սփռնել է կտավի
նման՝ լայն բացած աչքերով նայում է զայ-
րույթից վառվող դեմքերին, բարձրացրած ձեռ-
քերին։ Մեկը բռնեց նրա աձիքից, մյուսն աշխա-
տում է պոկել նրա փողկապը։ Հանկարծ Սու-
րիկի է պիտոնեքների միջև կանգնում է Շուշիկը։
Բարձրահասակ, ուժեղ, նա պատվար է դառ-
նում հանցավորին։ Յեվ դեռ յերբեք, վոչ մի
ժողովում նրա ձայնը չի հնչել այդպես հրամա-
յողաբար, ինչպես հիմա։

— Հեռո՛ւ։ Միայն ողակավարներին խորհուրդը
կարող է դուրս բերել նրան խմբից։ Հիմա վոչ
վոք չի համարձակվի նրան դիպչել։ Առաջին
վարկյանին ամեն ինչ լռեց, բայց շուտով աղ-
մուկն ավելի սաստկացավ։

— Կանչել ողակավարների խորհուրդը ան-
միջապես, առանց հետաձգելու։

— Ողակավարները չկան։

Նրանք այստեղ են, բոլորն էլ դահլի-
ճում են։

— Կոլվարը չկա։

— Կարելի է առանց կոլվարի։

— Իսկ սեղան։ Առանց սեղանի՞, առանց
նստարանների։

— Սեղանը գրասենյակից կրբերենք։

— Նստարաններն ընդունարանից կըվեր-
ցնենք։

— Իսկույն է յեթ։

Շուշիկն ու «Կծիկը» խորհուրդ են տալիս
սպասել մինչև վաղը՝ ողակավար Արծիվը չըկա։
Այդպես շտապ վոչ վոքի չեն դատում։ Բայց
մնացածները լսել էլ չեն ուզում։

— Ձի կարելի հետաձգել։

— Այսօր պետք է ամեն ինչ վերջացնենք։

— Սուրբիկը վոչ մի ըոպե չպետք է մնա կոլ-
լեկտիվի մեջ։

Մինչդեռ դահլիճում վիճում են, յերկու
տղա արդեն ներս են բերում գրասենյակից սե-
ղանը, իսկ աղջկերքն ընդունարանից քաշ են տա-
լիս յերկար նստարանը։

— Իսկ զանգը, զանգ չկա ախար։

Մեկը բերում է զանգի փոխարեն թիթեղ-
յա գավաթը։

— Թուղթ չկա։

— Թուղթ ու թանաք կարելի չէ գրասենյա-
կից վերցնել։

— Չեն տա։

— Կըտան։

Մի ըոպեյից բերվում է թուղթը և թանաքը։

Աստղիկը գրչահատով ուժեղ զրնգացնում է
գավաթը։

— Ընկերներ, խնդրեմ գրավեք տեղներդ:

Յերկար նստարանի վրա նստում են չորս ողակավորները— Վահան Տիգրանյանը, Շուշիկը, Կոստանը և Աշխեն Գալստյանը: Սուրիկի համար բերում են աթոռ: Մնացած պիոներները նստում են ուղղակի հատակին, վորը ծածկված է թարմ ուռի տերևներով:— յերեկ «Յերիտասարդության տոնն»-եր և դահլիճն ամբողջովին դեռ զարդարված է կանաչով: Հատակին շատ պսակներ և ճյուղեր են թափված: Բուրում է ինչպես անտառում:

— Նախագահ ընտրել:

Նախագահի ընտրությունը, վոր սովորաբար կատարվում է ուժեղ աղմուկի ու ձեռքերի թափահարության տակ, վերջանում է բավականին արագ:

Չայների մեծամասնությամբ Շուշիկն անցնում է:

— Քարտուղար ընտրել:

— Աստղիկը, Աստղիկը:

Աստղիկն ընտրվում է միաձայն:

Փոքրիկ, հասուիկ Աստղիկը նստում է նրստարանի ծայրին, քաշում է իրեն մոտ թուղթը և իսկույն սկսում է գրել, մի կողմ թեքելով գլուխը:

Նախագահն ասում է.

— Ընկերներ ողակավարների խորհրդի նիստը համարում եմ բացված:

Կանաչ վոստերով զարդարված ահագին դահլիճում համարյա թե կորչում է պիոներների խումբը, վորոնք նստած են հատակին, կողքի վրա, սեղանից վոչ հեռու, փայտյա աթոռի վրա նստած է Սուրիկը— այնպես միայնակ, խղճուկ: Նա ամբողջովին կարծես կծկվել է և ուզում է ինչքան կարելի է փոքր յերևալ:

Նա չի նայում վոչ ողակավարներին, վոչ ել պիոներներին և համառորեն տրորում է փողկապի ծայրերը:

Իսկ պիոներները բոլորը նայում են նրան: Այնպես են նայում, կարծես թե նոր են տեսնում նրա կլոր դեմքը, կոշտ քիթը և սև գանգուր մազերը: Իսկ նրանցից վո՞րը չգիտե Սուրիկին: Չէ՞ վոր նա նրանց հետ ամբողջ 6 շաբաթ ապրել է բանակում, և բոլորը նրան սիրում եյին: Նա այնպիսի ծիծաղելի ծամածուծություններ եր անում, և բոլոր աղերքից ամենից ավելի ուրախն էր:

Այնտեղ, վորտեղ հարկավոր եր վճռականություն, ույժ, սովորություն, Սուրիկը միշտ առաջինն եր: Բոլորը հիշում են, ինչպես նա մի ամբողջ օր աշխատեց, յերբ ջուրը վողոգել եր ջրհորը և պետք եր փորել նորը: Իսկ յերբ հի-

մար Շողիկը մոլորվեց անտառում և մինչև իրիկուն տուն չեկավ, Սուրիկը առաջինը ձայնեց վոր պետք է փնտռել նրան և առաջինը վազեց ոգնություն, և ահա Սուրիկը գող է: Փող է գողացել տուփից, պիոներների անունն է խայտառակել: Հիմա այլևս չի կարելի նրան սիրել, չի կարելի ծիծաղել նրա կատակների և ծամածռությունների վրա:

Յեվ ցավալի յե, անքան ցավալի, վոր դա արել է Սուրիկը, հենց ինքը Սուրիկը:

Քարտուղարը հայտարարում է.

— Որակարգի մեջ դրված է Սուրիկի հարցը, վոր գողացել է տուփից անապաստան յերեսանների համար հավաքած փողը:

— Ընկերներ, խոսքը վերցնում եմ ինձ, ասում է Շուշիկը և, դառնալով Սուրիկին, հարցնում է.

— Ի՞նչքան ես վերցրել:

— Մի ռուբլի:

— Քեզ մոտ է փողը:

Սուրիկը բացասաբար շարժում է գլուխը:

— Ի՞նչ ես արել բա:

Սուրիկը լուռ է:

— Սուրիկ, — խիստ ձայնով ասում է Շուշիկը. ճշմարիտը խոսիր. չէ՞ վոր դու դեռ պիոներ ես:

— Հաց և կալբաս գնեցի, շտապ՝ ասում է Սուրիկը:

Հատակին նստած պիոներները ծիծաղում են:

Նախագահը դանակով խփում է գավաթին:

— Ընկերներ, խնդրում եմ լուռ թյուն պահ պանել:

Ծիծաղը դադարում է:

— Ինչո՞ւ դու այդ բանն արիր, — հարցնում է Շուշիկը:

— Յես սոված եյի, առավոտից ման եյի ածում տուփը, սաստիկ քաղցել եյի:

— Տես ինչ խելոք է, բղավում է մեկը:

— Մենք բոլորս եյինք սոված, և վոչ մեկը չգողացավ:

— Կարող եյիր տուն գնալ ուտել:

Սուրիկը այս անգամ բարձրացնում է գլուխը և նայում է պիոներներին:

— Յես տուն չունեմ, հանգիստ ասում է նա:

Մանուկները շփոթված են:

— Վերտեղ ես ապրում դու, — հարցնում է նախագահը:

— Մի ծերունու մոտ, վոր շուկայում աման է ծախում:

— Իսկ ծնողներ չունե՞ս:

— Վոչ:

Հարազատներ ել չունես:

— Վոչ:

— Իսկ դպրոց գնում ես:

— Վոչ: Գնում եյի, քանի մայրս կենդանի
յեր—հիմա արդեն յերկու տարի յե չեմ գնում:

— Բա ինչո՞վ ես ապրում:

— Աման եմ ծախում շուկայում,—ավելի
կամաց ասում ե Սուրբիկը ու սպասում ե՝ ելի
հիմա կըծիծաղեն:

Բայց դահլիճում խորը լուռթյուն ե:

— Իսկ գրքեր կարդում ես,—հարցնում ե
Շուշիկը:

Սուրբիկը բացասաբար շարժում ե գլուխը:

— Շուկայում ծերունին չի թողնում կար-
դամ, ասում ե ամանները գողանալ կըտաս, իսկ
տանը յերբեք լամպ չի վառում—ժլատություն
ե անում: Հիմա, վոր ակումբից տուն եմ դառ-
նում, իսկույն պառկում եմ:

Մի քանի րոպե լուռթյուն ե տիրում:

Հսկում ե քարտուղարի գրչի ճրճուցը: Աստ
ղիկը խնամքով արձանագրում ե՝ այս կողմ այն
կողմ թեքելով գլուխը:

— Սուրբիկ, ասում ե վերջապես Շուշիկը,—
դու գիտե՞ս, Սուրբիկ, ի՞նչ ես արել, ո՞ւմ ես թա-
լանել. դու թալանել ես խեղճ, անապաստան յե-
րեխաներին: Դու յուրացրել ես նրանց համար

հավաքած փողերը: Ո՞վ ե տվել քեզ այդ փողե-
րը: Պարոնները, հարուստները. վոչ. Ձե՞ վոր-
դու գիտես, ինքդ ես հավաքել: Տվել են բան-
վորները, վորոնք ինքներն ել քիչ փող ունեն, վո-
րոնք իրենց յերեխաների բերնից են կտրում,
վորովհետև այն յերեխաներն ավելի սոված են:
Նրանք տվել են մեզ՝ պիոներներին, հավատա-
ցած լինելով, վոր այդ փողերով անապաստան
յերեխաները սովից պիտի փրկվեն, իսկ դու, մի
պիոներ, գողանում ես այդ փողերը, վորպեսզի
գնես հաց ու կալբաս:

— Դուքս շարտել նրան խմբից:

— Դեն գցեք նրան:

Նախագահը ամբողջ ուժով զանգահարում ե
զավաթը:

— Ընկերներ, ով վոր խանգարի, նա դուքս
կըգնա:

Աղմուկը դադարում ե:

— Սուրբիկ, — հայտնում ե շուշիկը. ի՞նչ կա-
րող ես ասել քեզ արդարացնելու համար:

Սուրբիկը կանգնած ե դժգույն, բոլոր բծե-
րը նրա յերեսի վրա պարզ յերևում են: Դրժ-
բախտ փողկապը խողովակի ձև ե ստացել: Նրա
թերթերունքները, յերկաթի պես ծանր, իրենք

իրենց իջնում են աչքերի վրա, բայց նա վեր ե բարձրացնում ու նայում ե Շուշիկին:

Սուրիկն ավելի համարձակ ե դառնում:

Շտապ, կարծես վախենալով, վոր իրեն թույլ չեն տա վերջացնելու, նա ասում ե.

— Յես կարծում եմ այդ անապաստան յերեսները շատ են, և փող ել շատ ենք հավաքել նրանց համար, և յեթե այդ փողերից մի ուրբի վերցնեմ, նրանք բոլորովին վոչինչ չեն զգա, իսկ յես... յես ել սոված եյի:

Այդտեղ նորից փոթորիկ ե բարձրանում:

— Ի՛նչ լավ հաշվել ե:

— Ի՛նչ խելոքն ե:

— Ի՛նչ լավ մտածել ե:

Նախագահը հաղիվ կարգը վերականգնում ե: Խոսքը դառավոր Վահան Տիգրանյանինն ե: Վահանն ընկերների մեջ մեծ հարգանք ե վայելում: Նրա սուր լեզվից ավելի յեն վախենում, քան ուժեղ բռունցքներից:

Վահանը վեր ե կենում և խոսում ե կարճ, հանգիստ, համոզիչ:

— Ընկերներ այն, ինչ վոր Սուրիկը ասում ե իրեն արդարացնելու համար— դա իսկի յել արդարանալ չի: Մի ուրբի գողանաս հասարակական փողերից, թե յերեք հազար— դա միևնույնն ե: Գողությունը մնում ե գողություն:

Մենք մեծ գումար ենք հավաքել, բայց այդ գումարը կազմված ե կոպեկներից: Յեթե ամեն մի բանվոր, ամեն մի ծառայող մտածեր, վոր անապաստան յերեսները չեն զգա նրա մի քանի կոպեկը, այդ դեպքում մենք վոչինչ չեյինք հավաքի: Ընդհակառակը նրանցից ամեն մեկը գիտեր, վոր այդ կոպեկները միացրած մյուս կոպեկներին, կըդառնան հազարներ, նրանցից ամեն մեկը հավատում եր, վոր իր մի քանի կոպեկը կըծախսվի անապաստան յերեսների վրա: Սուրիկը խաբեց նրանց, խախտեց պիտաների յերգումը, դավաճանեց աշխատավորական գործին:

Ընկերներ, Սուրիկը այլևս չի կարող պիտաներ լինել:

— Չի կարող, չի կարող, դուքս անել նրան:

Հատակին նստած պիտաներների խմբից վեր ե կենում հանկարծ Նունիկը: Յերբ նա խոսում ե, ամբողջովին կարմրում ե ափսոս, վոր թվում ե, թե աչքերն ել են կարմրում:

Մի քանի րոպե Նունիկը կանգնած ե, ձեռքը վերե բարձրացրած, մինչև աղմուկը կըդադարի:

— Ընկերներ, խոսք եմ խնդրում: Յես ուզում եյի ձեզ ասել այ թե ինչ: Սուրիկը մեղավոր ե, անպայման մեղավոր ե, դա վոչ վոք ժխտել չի կարող. բայց ինչո՞ւ մեզնից վոչ վոք

չըզիտեր, վոր նա տուն չունի, վոր նա դպրոց չի գնում, վոր նա վորք ե: Մենք ամբողջ ամառը նրա հետ ապրեցինք բանակում, ծիծաղում էյինք նրա կատակների վրա: Մենք միշտ ուրախ ենք տեսել նրան: Վոչ վոք չհարցրեց նրան ինչով ե նա ապրում և վոչ վոք չեր իմանում, վոր նա շուկայում աման ե ծախում:

— Յես գիտեյի,— լսվում ե մի ձայն: Նուսիկը թեքվում ե դեպի այդ ձայնը:

— Ավելի վատ, վոր դու գիտեիր և վոչ վոք չեյիր ասում:

— Սուրբիկը մենակ եր: Յեթե նա այդպես մենակ չըլիներ, գուցե նա այդ բանը չաներ: Դա շատ վատ ե, ընկերներ, վոր մենք այդքան քիչ բան գիտենք մեկս մյուսի մասին: Յեվ յես կարծում եմ, վոր մենք ել մի քիչ մեղավոր ենք Սուրբիկի արածի համար:

Յեվ Նունիկը սաստիկ կարմրած, շտապ նստում ե հատակի վրա, իր տեղը:

— Ընկերներ, ել ով ե ուզում Սուրբիկի մասին խոսել,— հարցնում ե Շուշիկը:— Բայց... պաշտպանեցեք նրան, հերիք ե, ինչքան վոր վատաբանեցինք:

Նստարանից բարձրանում ե Աշխեն Գալստյանը: Հանգիստ դիտում ե բոլորին իր սև աչքերով:

— Սուրբիկը վատ բան ե արել, խայտառակ բան, վոչ մի պիոներ դեռ իրեն չի արատա-վորել այդպիսի վարմունքով: Մենք զանազան գործեր ենք քննել—մենք կոլլեկտիվից դուրս ենք արել ծխելու կամ ուրիշ բանի համար: Յեվ հիմա թվում ե Սուրբիկը ավելի քան արժանի ե դուրս վոնդվելու:

— Ի հարկե, անմիջապես:

Աշխենը հանգիստ սպասում ե մինչև կը-հանդարտվեն:

— Սակայն, ընկերներ, մենք այդ բանը անել չենք կարող, մենք Սուրբիկին չենք կարող դուրս հանել խմբից:

Անսկարագրելի աղմուկ ե բարձրանում: Նախագահը հուսահատ զանգահարում ե...

— Լավ մտածեցեք, ռւր կըգնա նա, ինչ կը լինի նրա հետ: Ծիշտ ե նա շատ վատ ե վարվել, բայց մինչև հիմա մենք նրա մասին վոչ մի վատ բան չենք լսել, նա լավ պիոներ ե յեղել, լավ ընկեր ե յեղել: Յեթե մենք նրան հիմա վոնդենք, նա կըմնա մենակ, առանց ոգ-նության, առանց խնամքի, իսկ յեթե մենք նրան ոգնենք, գուցե նա կուզգվի: Ընկերներ, վերջացնում ե Աշխենը բարձրացնելով ձայնը, յես ձայն եմ տալիս Սուրբիկին խմբում թողնելու համար:

1003
13188



Դահլիճում աղմուկ է: Նախագահը զանգահարում է, քարտուղարը ծեծում է մատիտով սեղանը:

— Ե՛լ ով ե խոսք խնդրում,— գոռում է նախագահը:

Բայց վոչ վոք խոսք չի խնդրում, բոլորը միաժամանակ բղավում են: Յերեխաները վեր են թռչում տեղներից, ձեռքներն են թափահառում, աշխատում են մեկը մյուսից ավելի բարձր բղավել, իսկ անկյունում վոստերի կույտի վրա նստած է մեն-մենակ Սուրիկը:

Գառնոն բարձրացել է սեղանի վրա և, ձեռքերը խողովակաձև դնելով բերանին, բղավում է.

— Հանդարտ:

Վերջապես աղմուկը հանդարտվում է:

— Ընկերներ, ասում է Շուշիկը,— կա յերկու առաջարկություն: Մեկը— դուրս հանել Սուրիկին խմբից, մյուսը— թողնել նրան խմբի մեջ, ի նկատի առնելով, վոր նա վոչ վոք չունի, և, վոր յեթե մենք նրան հեռացնենք, նա կըմնա բախտի կամքին: Յես վերջին առաջարկությունն եմ կողմնակից: Ել ո՞վ ունի առաջարկություն:

Այդտեղ նորից պիոներների խմբից դուրս է գալիս Նունիկը: Նրա դեմքը վառվում է և ձայնը դողում է, յերբ նա սկսում է.

— Ընկերներ, յես առաջարկություն եմ մըտ-

ցնում, վորպեսզի հենց հիմա մի հանձնաժողով ընտրենք, վորը կաշխատի Սուրիկին դպրոց ուղարկել և բացի դա, վորպեսզի ամբողջ կողմերի վերջնի նրան իր հովանավորություն տակ:

— Ո՞վ է կողմնակից Նունիկի առաջարկությանը,— հարցնում է նախագահը: Շատ ձեռքեր վեր են բարձրանում:

— Մեծամասնությունը...

— Խոսք եմ խնդրում,— գոռում է պիոներներից մեկը:

Յեվ պինդ հրմշտելով հարևաններին, հատակից բարձրանում է «Տոուզը».

— Ի՞մ կարծիքով Սուրիկին թողնել խմբում բիչ է, դպրոց ուղարկելն էլ քիչ է: Մենք պետք է նրա մեղքը ուղղենք և տանք անապատան յերեխաներին նրա վերցրած փողը: Յես առաջարկություն եմ մտցնում, վոր վաղը մեզնից ամեն մեկը բերի ինչքան կարող է ծախսված ուրլին հավաքելու համար:

Յերեխաները նայում են մեկ մեկու յերես, ժպտում են: Այ քեզ հրաշք: «Տոուզը» հենց նոր բոլորից շատ եր գոռում, պահանջում եր «դուրս գցել խմբից», իսկ հիմա ինչ մտածեց: Յեվ բոլորը վիտեն, նա սաստիկ սիրում է իրիս և ամեն մի կուպեկի համար դողում է:

— Այ, ապրես դու, «Տոուզ»:

Դե, իհարկե, մյուսները նրանից պակաս
չեն։ Բոլորը ձայն են տալիս «Տուրքի» առա-
ջարկությանը։ Իսկ յերբ գործը հասնում է
վճռական քվեարկության՝ «Թողնել Սուրբիկին
խմբի մեջ» — ձեռքերի մի անտառ է բարձրանում։
Բոլորը նրա կողմն են, չկա դեմ։

Ընկերներ, — ասում է Շողիկը, խորհրդի ժո-
ղովը վերջացած է։

— Սուրբիկ, լսեցի՞ր, դու կըմնաս խմբի
մեջ։

Սուրբիկը վեր է թռչում աթոռից, մեկ սը-
փրպնում է, մեկ կարմրում։

— Լսեցեք... Յես... յես վարվեցի ինչպես
մի վերջին սրիկա, իսկ դուք... — բայց այդտեղ
նրա պոռչներն սկսում են դողալ և Սուրբիկը
զլխապատառ նետում է իրեն ընդունարան։ Յե-
րեխաները վազում են նրա յետևից, բռնում են
նրա բաձկոնից, թևերից։

— Դե, լավ, Սուրբիկ, հերիք է, թող, ամեն
ինչ լավ կըլինի... մենք եդ փողը կըհավաքենք,
լսեցի՞ր, չե՞։

— Դե, Սուրբիկ, մի լար, ասում է Նունիկը,
աշխատելով պոկել նրա ձեռքերը յերեսից և չի
նկատում, վոր ինքը լալիս է և վոր արտասուքը
վողողել է նրա ամբողջ յերեսը։



<< Ազգային գրադարան



NL0315837

2809

ԳԻՆՆ Ե 10 ԿՈՊ.



891.715

Բ-77